



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԱՆ ԱՇՈՏ ԱՐՄԵՆՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ԱՇՈՏ ԱՐՄԷՆԵԱՆ,
ՈՐ Ի ԶԵՐՄՈՒԿ**

Յարգարժան պրն Արսէնեան,

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Մեր հոգին այսօր լցուած է նուիրական զգացումներով, քանզի Բարձրեալ Տիրոջ կամքով ու օրհնութեամբ, Սուրբ Էջմիածնի Սրբալոյս Միւռոնով եւ փառաբանական Մեր աղօթքներով ու մաղթանքներով եւս մէկ եկեղեցի օժեցինք քրիստոնէական յիշատակութիւններով ու վաղ միջնադարեան սրբատեղիներով յայտնի հայոց Միւնեաց աշխարհի այս գողտրիկ վայրում, Հայրենի մեր նուիրական հողում: Սուրբ Գայանէ եկեղեցին, որի կառուցումը հովանաւորեցիք ինքնաբոյս նուիրումով, օրհնութիւն է Ձերմուկ քաղաքի հաւատաւոր Մեր զաւակների համար՝ առաւել զորաւոր եւ հաստատուն դարձնելու նրանց մեր հայրերի լոյս հաւատքի մէջ: Գոհութիւն Աստուծոյ, որ հայրենաբնակ Մեր զաւակները նախանձախնդիր են եկեղեցաշէն ծրագրերի իրականացման՝ վկայելով իրենց հաւատն առ Աստուած եւ սէրը՝ առ Մայր Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու

հաւատաւոր ժողովրդին, Սուրբ Գայանէ եկեղեցու օծման ուրախ առիթով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել մեր Մայր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Թող Սուրբ Գայանէ կոյսի բարեխօսութեամբ ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի Բարձրեալի շնորհների եւ ամենախնամ օրհնութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 18-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 445